Կարծիք

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

զարգացման ռազմավարական ծրագրի (2023-2027 թթ. -ի)

փաստաթղթի վերաբերյալ

Նախ հարկ եմ համարում անդրադառնալ փաստաթղթի մշակման գործընթացի ընթացակարգային մի քանի դրույթի՝ նաև նշելով, որ ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման (լավարկման) և հաշվետվողականության ապահովման հայեցակարգն (նոր խմբագրությամբ) ինձ համար անընդունելի է և դրա վերաբերյալ արտահայտել եմ իմ կարծիքը.

1. Ինձ համար անհասկանալի է, թե ինչպե՞ս կարող են համալսարանի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացից դուրս մնալ ըստ կառուցվածքի ռեկտորին անմիջականորեն ենթակա (ուղղաձիգ անմիջական կապով արտահայտված) և գործառութային շրջանակներով մեծ կարևորություն ներկայացնող երկու կենտրոններ (1. Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն և 2. Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոն), և նրանց ներգրավվածությունն արտահայտվի միայն նրանով, որ պահանջվի ներկայացնել կենտրոնի առաջնահերթությունները նույնիսկ չնշելով, թե ի՞նչ նպատակով:

Նշեմ, որ նույնպիսի անհասկանալի մոտեցում է դրևորվել նաև ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման պարագայում:

2. Առկա են դեպքեր, երբ ամբիոնների կողմից համապատասխան առաջնահերթությունները ներկայացվել են մեկ անձի կողմից՝ առանց ամբիոնի ՊԴ կազմի իրազեկման և նրա հետ քննարկման:

3. ՇՊՀ-ի ռազմավարական ծրագրի քննարկման հարցը ներառված է 2022-2023 ուստարվա Գիտական խորհրդի աշխատանքային պլանում: Մինչդեռ, եթե նախատեսվում է արդեն նոյեմբերի 19-ի Հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկել այս փաստաթուղթը, ապա հասկանալի է, որ այն այլևս չի դիտարկվելու Գիտական խորհրդի նիստում: Սա էլ է անհասկանալի, քանի որ այդ աշխատանքային պլանը հաստատելու նիստի ժամանակ հավելյալ կարևորվեց փաստաթուղթը գիտական խորհրդի նիստում քննարկելու

հանգամանքը: Միաժամանակ նշեմ, որ թիրախավորելով Գիտական խորհրդի անդամներին և նրանց առանձին խմբերի հետ քննարումներ անելը, դա Գիտական խորհրդի նիստ չէ: Այս պարագայում էլ այդ քննարկելի խմբերում վերոնշյալ երկու կենտրոնները հայտնվել էին ամենավերջին տեղում, որի կայացումը անհնար դարձավ: Հարց. ինչո՞վ է պայմանավորված այդ կենտրոնների նկատմամբ մոտեցումը, արդյո՞ք առկա է ռացիոնալ որևէ մեկնաբանություն:

4. Այժմ, այս ամենով հանդերձ անդրադառնամ սույն փաստաթղթի քննարկման համար հարթակում հատկացված ժամկետին: Այդ ժամկետը չափազանց սուղ է՝ նման փաստաթղթի խորապես ուսումնասիրման և ռացիոնալ մասնագիտական կարծիք արտահայտելու համար, և դա միայն իմ կարծիքը չէ, այլև տարբեր քննարկումների մասնակցած ներկայացուցիչների, ովքեր մինչ հանդիպումը չեն հասցրել նույնիսկ ընթերցել փաստաթուղթը, էլ ուր մնաց վերլուծել: Սույն փաստաթղթի՝ հարթակում հատկացված առանց այն էլ սուղ ժամկետը պատահականորեն համընկել է ՇՊՀ-ում Ուսանողական հանրապետական գիտաժողովի կազմակեպման խիստ զբաղված ընթացքի հետ, որին և անմիջական իմ պարտականություններին զուգընթաց պարզապես անհնար է դարձել որևէ կից փաստաթղթի ուսումնասիրումը: Սա է պատճառը, որ ես իմ կարծիքը ներկայացնում եմ ուշացմամբ, ինչի համար հայցում եմ ներողամիտ լինել: Իսկ դիտարկել այն, թե՞ ոչ, թողնում եմ Ձեր կամքին: Իմ նպատակը միայն գործուն փաստաթղթի առկայությունն է իմ սիրելի բուհի համար՝ իմ համեստ փորձի դիտանկյունից:

Այժմ անդրադառնամ բովանդակային դիտարկումներին այնչափով, որչափով որ ժամանակս թույլ է տվել, ներողություն եմ խնդրում ավելին չհասցնելու համար.

1) Կարծում եմ տեղին կլիներ այնպիսի կարգախոսի գործածումը, որը կվերաբերեր ոչ թե թիմի (որը, որքանով տեղյակ եմ, մեկնաբանվում է որպես առավելագույնը 12 անձից բաղկացած խումբ), այլև մեծ հանրույթով կոլեկտիվի, քանի որ ծրագիրը վերաբերում է բուհի, ոչ թե փոքր կազմակերպության, հատկապես, որ միտում կա ժողովրդավարական միջավայրը դիտել որպես արժեք:

2) Բովանդակության մեջ առանձնացվում են 1. Որակյալ կրթություն, 2. Արդիական և նորարար գիտական հետազոտություններ, 3. Հանրային ներգրավում նպատակները: Պետք է նշեմ, որ դրանք ԵՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում ներկայացված են որպես նպատակների բաժիններ, սակայն ոչ նպատակներ, իսկ այստեղ դրանք ներկայացվում են որպես նպատակներ: Կարծում եմ «Հանրային ներգրավում»-ը որպես նպատակ

անհասկանալի է, գուցե լինի միջոց, քաղաքականություն ինչ որ նպատակի հասնելու համար, սակայն՝ ոչ նպատակ։ Միաժամանակ, ՌԾ-ի կազմման բաժինների մասին ես ունեմ իմ մոտեցումը, որը համահունչ է ՇՊՀ-ի որակի ապահովման և կառավարման հայեցակարգին և ՇՊՀ-ում հաշվետվության գործող մեխանիզմին։ Բացի այդ, դրանք և դրանց վերլուծական լինելը կարևորվել է ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից, իսկ 2 տարի հավատարմագրման պարագայում փոփոխել այն, ինչը դրական է համարվել, կարծում եմ տեղին չէ և շռայլություն կլինի մեզ համար եղած սուղ ժամկետում շեշտադրված խնդիրների լուծումն հասցնելու տեսանկյունից։

3) 5-րդ էջում տեսլականի 1-ին և 2-րդ կետերը դիտարկելով՝ դժվար է կողմնորոշվել. մի դեպքում սահմանափակվում ենք հանրապետությունում մրցունակ հաստատություն լինելով, իսկ մյուս դեպքում դիտարկվում է Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքներին ինտեգրված հաստատություն լինելը։ Կարծում եմ այս հանգամանքը հստակեցման անհաժեշտություն ունի։ Միաժամանակ, Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքներին ինտեգրումը չի կարող անկախ լինել, հատկապես, որ բուհը պետական բուհ է, իսկ, ըստ ՀՀ կրթության մինչև 2030 թ.-ը զարգացման պետական ծրագրի և Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի նախագծի, այդպիսի ինտեգրումը, այնուամենայնիվ, կաշկանդված է ազգային կրթական լավագույն ավանդույթների և նվաճումների պահպանմամբ ու զարգացմամբ, ինչը, կարծում եմ, կարևոր է։ ՇՊՀ-ի ինտեգրումը հարկ է, որ լինի պետական քաղաքականությանը համահունչ, հետևաբար, գուցե, առանձին բուհի տեսլական լինել չի կարող։ 3-րդ կետը, ըստ իս, տեսլական չէ, կարող է լինել քաղաքականություն։ 4-րդ կետում յուրատեսակ համայնքային կենտրոնը չափելի չէ, և դժվար կլինի ասել դարձել է այդպիսին, թե՞ ոչ։

4) 7-րդ էջում ճանապարհային քարտեզ տեսանելի չէ։

5) Ընդհանուր առմամբ խնդիրների ներքո հիմնականում արդյունքներ են ներկայացված կամ պարզապես կապակցություններ (մասնավորաբար. էջ 16, խնդիր 5. Միջազգայնացում և համագործակցություն, էջ 17, խնդիր 6. Ընդունելություն և այլն), որոնցից չի հասկացվում թե ինչ խնդիր պիտի լուծեն ներքոնշյալ գործողությունները։ Այդպիսի կապակցություններ առկա են ԵՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում՝ որպես խնդիրների ընդգծված վերնագրեր։ Միաժամանակ, նույն խնդիրը կրկնվում է տարբեր նպատակների պարագայում՝ չարտահայտելով այդ նպատակի համար յուրահատկությունը։ Կարծում եմ, խնդիրները լիովին վերանայման անհրաժեշտություն ունեն՝ ձևակերպելով որպես հստակ խնդիրներ։

6) 8-րդ էջում նպատակ 1-ում խոսք է գնում որակավորումների ոլորտային շրջանակի մասին, սակայն դրանք դեռևս հստակ առկա չեն: Այս պարագայում, կարծում եմ, նման համապատասխանեցումը կարող է վտանգված լինել: Դրա հետ մեկտեղ նպատակը չի արտահայտում այդ ուղղությամբ միջազգային հավակնությունները, այդպիսի պահանջներին համապատասխանեցումը, կարծես թե դրանք բացակայում են:

7) 8-րդ էջում առաջին գործողությամբ նախատեսվում է համապատասխան փաստաթղթերի բարելավում միայն շահառուների և շահակիցների կարիքներին համահունչ: Կարծում եմ դա բավարար չէ, քանի որ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այդ ոլորտում ազգային և միջազգային զարգացման միտումները, որակի ապահովմանն ուղղված մոտեցումներն ու պահանջները:

8) 8-րդ էջում 2-րդ գործողությունում մասնագիտությունների օպտիմալացումը անհասկանալի է, հավանաբար նկատի է առնվում մասնագիտությունների փակում:

9) Էջ 9-ի առաջին գործողությունը, կարծում եմ, մշակման մասով արդեն ներառվում է առաջին գործողության մեջ: Իհարկե կարևոր է, փաստաթղթերի մշակումից հետո դրանց ներդրումն ու կիրառումը: Այս հանգամանքը հարկավոր է նկատի ունենալ մյուս պարագաներում ևս՝ չսահմանափակվելով միայն փաստաթղթի մշակմամբ: Հարկավոր է ապահովել դրանց կիրառումը՝ չսահմանափակվելով որպես կատարողականի ցուցիչ միայն փաստաթղթերի առկայությամբ, իսկ կիրառումից հետո՝ նաև այդ նույն փաստաթղթերի, ըստ անհրաժեշտության, բարելավումը:

10) 9-րդ էջում 2-րդ գործողությունում հավանաբար նկատի է առնվում գիտելիքի գնահատման համակարգը, հարկ է հստակեցնել: Համանմանորեն նաև կատարողականի ցուցիչներում:

11) Ցուցիչներից, թերևս, անդրադառնամ միայն մեկին: Մասնավորաբար, 3-րդ ցուցիչը, եթե նկատի ունենաք ձախ սյունակում նախատեսված գործողությունները, ապա լուծվելու է միայն համապատասխան մասնագիտությունների փակմամբ, սակայն, կարծում եմ, այդ հանգամանքը կարելի է որոշակիորեն մեղմել նաև դիմորդների ներգրավման մեխանիզմների և գործընթացների բարելավմամբ:

12) 10-րդ էջում 2-րդ գործողությունը, կարծում եմ, հստակեցման կարիք ունի, թե ինչպիսի՞ տեխնիկական միջոցների մասին է խոսքը, որպեսզի հասկանալի դառնա, թե դրանք կարող են արդյոք հասանելի դարձնել նախանշված արդյունքները:

13) 12-րդ էջում 1-ին գործողությունում անհասկանալի է, թե ինչպիսի՞ կարիքների մասին է խոսքը: Այս հանգամանքը ճշգրտելու անհրաժեշտություն ունի նաև մյուս

գործողություններում։ Միաժամանակ, այդպիսի կարևոր գործընթացները չեն կարող պայմանավորվել միայն կարիքների հենքով, հարկ է առաջնորդվել է բուհի քաղաքականությամբ, ռազմավարական նպատակներով և այլն։ Նաև անհասկանալի է ՊԴ կազմի միայն մասնագիտական, մանկավարժական և ՏՏ կոմպետենցիաների զարգացմանն ուղղված վերապատրաստումների իրականացումը։ Միթե՞ բուհը միտում չունի ՊԴ կազմի լեզվաիմացության զարգացմանը միտված միջոցառումներ իրականացնելու։

14) 14-րդ էջի առաջին ցուցիչով նախատեսվում է ունենալ կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերն արտահայտող փոփոխված նոր կառուցվածք։ Սա ենթադրում է, որ կառուցվածքային փոփոխության համար նպատակը այդպիսի կապերի արտահայտումն է, սակայն միթե՞ այժմյան կամ նաև նախորդ գործող կառուցվածքները զերծ են նման կապերից։ Սա անհասկանալի է։

15) 14-րդ էջում կատարողականի 3-րդ ցուցիչով նախատեսվում է էլեկտրոնային հավելված-հարթակ, որը պարզ չէ։ ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից կարևորվել է Mulberry համակարգի ներդնումը, ինչը կարևոր հարթակ է ոչ միայն արդյունավետ կառավարման, այլև գործընթացների թափանցիկության ապահովման տեսանկյունից։ Այս առումով «էլեկտրոնային հավելված-հարթակ»-ը արդյո՞ք ապահովում է նույնպիսի մոտեցում։

16) Էջ 16-ում կատարողականի ցուցիչներում նախատեսում ենք առնվազն 5 հրավիրյալ պրոֆեսոր, դոցենտ, սակայն որևէ անդրադարձ չկա գործատու-դասավանդողներին, ինչը չափազանց կարևոր է գործնական կարողությունների և հմտությունների վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից։ Արդյո՞ք գործատուների հետ համագործակցությունը, դրա ընդլայնումը չի կարևորվում։ Առանց այդպիսի համագործակցության աշխատանքի վրա հիմնված ՄԿԾ-ների իրականացումը կամ նույնիսկ պարզապես ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը, կարծում եմ, հնարավոր չէ։

17) Անդրադառնալով 2-րդ նպատակին, դրա համապատասխան խնդիրներին և գործողություններին՝ նշեմ, որ այս ուղղությամբ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից ներկայացվել են առաջնահերթությունները, որոնք բխում են նաև ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խնդիրներից, ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունից (որն իր հերթին հիմնված է նախորդիվ իրականացված վերլուծությունների վրա), ինչպես նաև՝ գիտության ոլորտում զարգացման միտումներից։

Միաժամանակ անհասկանալի է, թե ինչպե՞ս է սահմանված այս ուղղությամբ նպատակը, եթե դեռևս չեն հստակեցվել առաջնահերթությունները: Դրա հետ մեկտեղ, սահմանված նպատակի առաջին հատվածը (բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով իրականացնել գիտական հետազոտություններ) արդեն առկա է, և նման չափազանց համեստ նպատակը կարող է իրագործվել նույնիսկ առանց հատուկ մեխանիզմների՝ ՊԴ կազմի անձնական նախաձեռնությունների արդյունքում: Ընդ որում, անհասկանալի է այն հանգամանքը, որ մենք բացառում ենք օրինակ մաթեմատիկական, տնտեսագիտական ուղղություններով հետազոտությունների իրականացումը, այն պարագայում, երբ այդ ուղղություններով հետազոտողի կրթական ծրագրով ուսումնառություն կազմակերպելու իրավունք ունենք:

Ներկայացված որոշ առանձին գործողություններ, կարծում եմ, կարևոր են, բայց ընդհանուր առմամբ հստակ կոնցեպտի անհրաժեշտություն կա:

Կանգ առնեմ մասնավոր որոշ հանգամանքների վրա.

Ըստ կատարողականի ցուցիչի նախատեսվում է ասպիրանտուրայի դիմորդների թվաքանակի աճ, կարծում եմ, որ սա հիմնավորման ու երաշխիքների անհրաժեշտություն ունեն, իմ վերլուծության արդյունքները հակասում են սրան:

Փոփոխված կառուցվածքը չի կարող հանդես գալ որպես կատարողականի ցուցիչ: Քանի որ ցանկացած փոփոխություն կարող է լինել դրական կամ բացասական, կարևորը փոփոխություններով նախատեսված ակնկալելի հստակ արդյունքներն են, որոնք կարող են հանդես գալ որպես կատարողականի ցուցիչներ:

Անհասկանալի է, որ շեշտադրումը տարբեր գիտահետազոտական գործընթացների մասով սահմանափակվում է խրախուսմամբ, մինչդեռ խրախուսման մեխանիզմներ, թերևս, առկա են, դրանք կարելի է զարգացնել: Սակայն կարևոր է նաև աջակցման մեխանիզմների ներդրումը, մասնավորաբար ըստ ՇՊՀ-ի գիտության և հետազոտության միջազգայնացման քաղաքականության:

Միաժամանակ, անհասկանալի է, որ որևէ գործողությամբ անդրադարձ չի կատարվում ՇՊՀ-ի գիտական տեղեկագիր հանդեսին, որի գոյության և զարգացման համար ահռելի աշխատանք է տարվել և տարվում:

Նշեմ, որ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից ներկայացվել են գիտության և որակի ապահովման ու կառավարման ուղղություններով առաջնահերթությունները, ինչպես նաև «Հետազոտություն և զարգացում»

և «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշների շրջանակներում ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների հենքով թերությունների վերացման ծրագիր, որոնցից միայն որոշ առանձին գործողություններ են հաշվի առնվել այստեղ։

Ընդհանրապես, փաստաթղթում առաքելություն->նպատակներ->խնդիրներ->գործողություններ->կատարողականի ցուցիչներ անհաժեշտ կապը աղավաղված է և լիովին խզվում է այն հանգամանքով պայմանավորված, որ խնդիրներ, որպես այդպիսին, ձևակերպված չեն։ Միաժամանակ կարևոր է ցուցիչների հստակության և չափելիության ապահովման հարցը։

Կսահմանափակեմ իմ խոսքը այսքանով, քանի որ անմիջական գործառույթներիս իրականացումը ինձ թույլ չի տալիս առավել հանգամանորեն անդրադառնալ հարցերին։ Միաժամանակ անդրադարձ չեմ կատարի վերջին նպատակին և դրա ներքո ներկայացված բովանդակությանը, որպեսզի հնարավորիինս շուտ ներկայացնեմ։

Հարգանքով՝
Գիտական քաղաքականության, որակի ապահովման
և կառավարման կենտրոնի տնօրեն՝ Արմենուհի Հակոբի Սարգսյան